

ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ՐԱԳԻ, Հայ-հունգարական գրական առնչությունները
և «Արմենիա» ամսագիրը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳՍ. հրատարակչություն,
1979, 187 էջ:

Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերը դարավոր անցյալ ունենւ Այդ կապերի ուսումնասիրումը կարևոր է երկու ժողովուրդների բարեկամության սերտացման, միաժամանակ նրանց ամբողջական պատմության ստեղծման համար: Այս առումով էլ միանգամայն ողջունելի է էվա Գեորգյան-Րագիի գրախոսվող աշխատությունը, ուր հեղինակը առաջին անգամ հանգամանալից ուսումնասիրում է հունգարահայերի կողմից իրենց գոյատևման և ազգային ինքնությունության պահպանման հասար մղած համառ ու երկարատև պայքարի պատմության հետաքրքիր ժամանակաշրջաններից մեկը: Դա Տրանսիլվանիայի հայերի կենտրոն Դեոլյա (Սամոշուլար) հայաքաղաքում (այժմ Թումինիայում) հայ մշակույթի նվիրյալ ու ջերմ հայրենասեր, դիտական խաչիկ Սոնդոտյանի (Կրիշտոֆ Սոնդոտ, 1843—1907) կողմից հրատարակված «Արմենիա» հունգարերեն հայագիտական ամսագրի ավելի քան քսանամյա (1887—1907, 1913) գործունեության և դերի բացահայտումն է, նրա էջերում հայ-հունգարական գրական առնչությունների արտացոլման ուսումնասիրությունը:

Դեոլյայի «Արմենիան» անգնահատելի դեր խաղաց XIX դարի վերջին և XX դարի սկզբին ձուլման եզրին հասած հունգարահայության ազգային ինքնագիտակցության զարգացման գործում: Թեև «Արմենիան» դարձավ հունգարահայ պարբերական մամուլի կարապի երգը, սակայն նրա առաջ բերած մեծ ոգևորությունը նոր շունչ ներարկեց հայ գաղութին և իր կատարած դերով անկորնչելի անուն թողեց Տրանսիլվանիայի հայերի ազգային մաքառման պատմության մեջ:

«Արմենիա» ամսագրի ուսումնասիրությունը վաղուց հրամայական պահանջ էր դարձել էվա Գեորգյան-Րագին հունգարերենի քաջ իմացության հետ մեկտեղ, կարճ ժամանակում տիրապետելով նաև հայերենին, հմտանալով երկու ժողովուրդների գրականության, բանահյուսության և գիտական գրականության մեջ, նախ

Հունգարիայի գրադարաններում ի հայտ է բերել «Արմենիայի» բոլոր այն համարները, որոնք բացակայում են Երևանի գրադահոցներում, ապա կատարել է գիտահետազոտական ու աղբյուրագիտական տրնաջան աշխատանք, որի շնորհիվ նրան հաջողվել է նոր գրական մի աշխարհ բացել: Հեղինակը ի կատար է ածում տրանսիլվանահայ մշակույթի գործիչների փայլափայլած երազանքը. հայրենի գրականությանը վերադարձնել նրա անբաժան մասը կազմող հունգարահայերի գեղարվեստական ստեղծագործությունները, գրականագիտական գործերը, հայերի մասին հունգար գրողների երկերը և վերջապես դարձյալ «Արմենիայում» հայ գրողների գործերի հունգարերեն թարգմանությունները:

«Երկու խոսքում» Գեորգյան-Րագին կանգ է առնում հայ-հունգարական կապերի հետ առնչվող աշխատանքների վրա: Գրքի առաջին դիտում նա լուսարանում է «Հունգարահայերը և գաղթավայրի մշակութային ու հոգևոր զարթոնքը XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին» հարցը: Այստեղ նա համառոտակի ցույց է տվել հունգարահայության շուրջ հաղարամյա կյանքը, անդրադարձել XIX դարի երկրորդ կեսից Տրանսիլվանիայի հայերի մոտ ծնունդ առնող ազգային վերածնության շարժման նախադրյալներին:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է «Արմենիայի» ընդհանուր բնութագրմանը, ուր խոսվում է հանդեսի բովանդակության, խմբագրի, աշխատակիցների, նրա վայելած ժողովրդականության և ստանձնած դերի մասին: Հայ ժողովրդի ընդհանուր պատմության համար հատկապես ուշադրության արժանի է հունգարահայերի ցուցաբերած մեծ հետաքրքրությունը դեպի Հայկական հարցն ու 1895—1896 թթ. և 1909 թ. հայկական կոտորածները: Իր «Ինչնոր բաներ կան հայոց վրա» բաժնում ամսագիրը լուրեր է հրատարակել Արևմտյան Հայաստանի արյունալի իրադարձությունների մասին: Այդ կապակցությամբ ամսագրում հրա-

տարակված ամենաուշագրավ հողվածներից մեկն է բնիկ թիֆլիսահայ և Բուդապեշտում բնակվող Հակոբ Զիլինգարյանի «Հայոց պետական-իրավական վիճակը Թուրքիայում» (1895, № 5) գրվածքը: «Արմենիան», հաղորդելով թուրքերի կողմից հայերի նկատմամբ գործադրված բարբարոսական ջարդերի մասին, գրում էր, որ «հայերի ջարդը կատարվում է հենց սուլթանի հրամանով»: Ամսագիրը միաժամանակ հրատարակել է լուսանկար-փաստաթուղթ, թե ինչպես թուրքերը բաց ծովում կոտորում են հայ փախստականներին: Պարբերականն առաջարկում էր հայ գաղթականներին ապաստան տալ հունգարահայ գաղութում: Գեղալում սկսվում է հանգանակություն, ամսագիրը պաշտպանում է այդ նախաձեռնությունը և հանգամանորեն լուսաբանում նրա ընթացքը:

«Արմենիան» քիչ երախտիք չունի նաև 1848—1849 թթ. Հունգարիայում և Տրանսիլվանիայում տեղի ունեցած հեղափոխությանը հայերի ցուցարհրած մասնակցությունը բացահայտելու, հայազգի գեներալների կյանքի ու գործունեության ուրվագծման և այլ հարցերի լուսաբանման գործում: Սոնգոտյանը Հունգարիայում առաջինն էր, որ կապ հաստատեց հունգարական հեղափոխության փառաբանված հայազգի գեներալ Հովհաննես Յևցյանի (Յանոշ Յեց) հետ: Վերջինս, բնակվելով Բուենոս Այրեսում, մինչև իր կյանքի վերջը մնաց ամսագրի մնայուն աշխատակիցը: «Արմենիան» հարված էր հասցնում բոլոր նրանց, ովքեր չիմանալով հայկական դատի արդար լինելը, փորձում էին վարկարեկել հայ անունը: Խաչիկ Սոնգոտյանի հրատարակած ամսագիրը մեծ համարում ուներ: Վիեննայի պարբերականներից մեկը ափսոսանք էր հայտնում, որ այն կարող են կարգալ միայն հունգարահայերն ու հունգարները (էջ 56): «Արմենիան» բարձր գնահատանքի աշխատանքով նաև հայ հրապարակախոսության կողմից: Իր քսանամյա գոյության ընթացքում այնտեղ տպագրվել է 1829 հողված, 2090 հաղորդում և 396 նկար: Նրա աշխատակիցների թիվը անցել է 150-ից: Ամսագիրը լայն տարածում ուներ ոչ միայն Հունգարիայի և Տրանսիլվանիայի շուրջ 85 բնակավայրերում, այլև նրա սահմաններից դուրս ավելի քան 20 քաղաքներում, ինչպես՝ Մոսկվայում, Թիֆլիսում, Կալկաթայում, Վիեննայում, Կ. Պոլսում, Բուխարեստում և այլուր: Էվա Գեորգյան-Բադին միանգամայն ճիշտ է գնահատել «Արմենիայի» կատարած դերը, այն համարելով «ձուլման շեմին կանգնած սակավաթիվ հունգարահայության՝ հանուն գոյատևման մղած հերոսական պայքարի դյուցազնագություն» (էջ 58):

Աշխատության երրորդ գլուխը՝ «Հունգարահայերի գրական ստեղծագործությունները», ամենաբնագործությունները է (էջ 58—112): Այն բաժանված է երեք ենթագլուխների. ա) Հունգարալեզու հայ գրականություն, բ) Հայալեզու քերթվածներ և գ) Փշրանքներ տրանսիլվանահայ բանահյուսությունից: Ինչպես ցույց է տալիս հեղինակը, հանդեսում տպագրված գրական երկերի լեզուն թեև հունգարերենն է և ստեղծագործողները արդեն իսկ հարյուրավոր տարիներ հայրենիքից հեռացած գաղթականների հետնորդներն են, սակայն նրանց գրվածքները շոշափում են միայն հայկական խնդիրներ՝ կապված այդ ժողովրդի ու նրա հունգարահայ հատվածի կյանքի ու պատմական ճակատագրի հետ (էջ 59): Ուշագրավ են Հակոբ Դոպչայանի (Յակար Գոպչա), էմերիկոս Միհալֆիի (Իմրե Միհալֆի), Ռ. Շալլակի, Յուլիոս Մերզայանի (Դյուլա Մերզա, որը հայտնի է նաև հայագիտական աշխատություններով), Դրիդոր Ֆեյերի, Լադիսլաուս Ըստկարյանի (Լասլո էստեգար) բանաստեղծություններից բերված հատվածները և նրանց վերլուծությունը:

Մերզայանը, «Հայ անկախության դյուցազուններ» բանաստեղծությունում, անդրադառնալով իր օրերին տեղի ունեցող Զեյթունի և Սասունի հերոսամարտերին, խոսքն ավարտում է հետևյալ քառատողով.

... Հեֆիաթ չէ սա և ոչ էլ երազ.

Հայոց հողում հիմա կոխվ է...

Դեռ ինչքան ժամանակ հայերը

Ազատության համար արյուն պիտի
րափեն:

«Արմենիայում» հետաքրքիր պատմվածքներով հանդես են եկել Վարդան Աֆղանստանին (Տիվադար Տեորեոշ), Կլարա Կրիտչան և ուրիշներ: Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ հունգարահայ գրողների գործերը հիմնականում կրել են ինչպես իրենց ժամանակակից հայ գրողների (որոնցից ընտիր հատվածներ լույս էին տեսնում «Արմենիայում»), այնպես էլ հունգար առաջավոր գրողների անմիջական ազդեցությունը:

Հայալեզու քերթվածների բաժինը հիմնականում նվիրված է բաղմավաստակ հունգարահայ հայագետ Ղուկաս Բադրուպանյանի՝ «Արմենիայում» հրատարակած բանաստեղծություններին: Նա հայերեն գրող վերջին բանաստեղծը

1 Հեղինակը վերոհիշյալ ազգանունը ամենուրեք գրել է Պատրուբանյան ձևով, որը ճիշտ է նրա անվան Patrubany հունգարական ձևի արևելահայ տառադարձության տեսակետից:

եղավ Հունգարիայում: Նրա ժառանգության մեծ մասը դարձյալ ընդգրկում էր Հայաստանին վիճակված ողբերգության, ինչպես նաև հունգարահայ գաղութին սպառնացող ճեղքման շարդի թեման:

Բանաստեղծը հավատում է, որ հայության հարության օրը մոտալուտ է: Բաղրուպանյանը իր «Հարյավ մեռելոց...» բանաստեղծությունը հղբափակում էր գրելով.

Քո համար ալ
Պիտի զա հաբուրյուն,
Հալերը ալ ազատ են...
Ուրախ լեր, մարդկություն:

Եվ կամ.

Խճը կուգաս ծաղիկ երկնային,
Շատ ուրախալ հայ ազատություն...
(էջ 91):

Ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, Բաղրուպանյանի քերթվածները մեծ արժեք ունեն նաև լեզվական հետազոտությունների համար, քանի որ եզակի են իրեն հունգարահայության շրջանում տարածված արևմտահայ աշխարհաբարի նմուշներ:

«Փշրանքներ տրանսիլվանահայ բանահյուսությունից» ենթավերնագրի տակ հեղինակը կանգ է առել ի. Սոնգոտյանի՝ հունգարահայոց ազգագրությանը նվիրված մեծարժեք հատորի վրա, որը պարբերաբար հրատարակվել է ամսագրում: Միաժամանակ մեջ է բերել և ուսումնասիրել Տրանսիլվանիայի հայոց հին երգերից, առածներից, հանելուկներից նմուշներ:

Չորրորդ գլուխը կրում է «Հունգար գրականությունը «Արմենիա» ամսագրում» խորագիրը (էջ 113—161) և ընդգրկում է երեք ուշագրավ ենթաբաժիններ. ա) Արա Դեղեցիկի առասպելի հունգարական մշակումը, բ) Հունգար գրողները հայերի մասին և գ) Հունգար գրականությունից կատարված առաջին թարգմանությունները: Հեղինակը թարգմանաբար ընդարձակ հատվածներ է բերել Եղիսարեթուպոլիս հայաքաղաքի գիմնազիայում գրականություն ավանդող հունգար (ավելի ճիշտ սեկլեր կամ սեկուլ) գրող Դավիթ Մարտոնի «Արա Դեղեցիկ» ողբերգությունից և ապա վերլուծել այն: Այդ գործը լույս էր տեսել նախ «Արմենիայում» (1896—

1897) և ապա հրատարակվել առանձին գրքով (1897): Հինգ գործողությունից բաղկացած այս ողբերգությունը, որը ցարդ անծանոթ էր հայ գրականությանը, էվա Գեորգյան-Բագիի գնահատմամբ կազմում է «Արմենիա» հանդեսը գրական լավագույն էջերից մեկը և այդ նյութի օտարալեզու մշակումներից ամենից ավելի մոտ է կանգնած իր պատմական հիմքին:

Արժեքավոր է նաև հունգար առաջին հայագետներին նվիրված բաժինը:

Անդրադառնալով Լ. Ըստկարյանի հոդվածին, նա կանգ է առնում Ռոգոսթո տարագրված հունգար գրող Կելեմեն Միկեշի (1690—1761) «Թուրքական նամականի» շարքում տեղ գտած հայկական նյութերի վրա: Բացահայտում է Միկեշի կողմից հայերի նիստուկացի, սովորույթների վերաբերյալ նյութերի ճանաչողական արժեքը: Նշում է նաև հունգար գրող ու պատմաբան Իշտվան Հորվաթի (1784—1846), արձակագիր Մոր Յոկայի (1825—1904, որը եղել է Եղիսարեթուպոլիս հայաքաղաքի պատգամավորը Հունգարիայի պետական ժողովում) որոշ ստեղծագործություններ:

Պարբերականում տպագրվել են Գեուլայի հայկյանքի մեծ երախտավոր Զաքարիա Կապրուլյանի 1840-ական թթ. կատարած երկու թարգմանությունները՝ հունգար բանաստեղծներ Ֆերենց Կեղեցիկի «Հիմնը» (1823) և Միհայ Վերնյամարտուի «Բարբառը» (1836) բանաստեղծությունները: Դրանք երկուսն էլ դարձել են ազգային երգեր և մինչև այսօր էլ երգվում են: Գեորգյան-Բագին գրականագիտական վերլուծման, ինչպես նաև բնագրի հետ մանրազնին համեմատության միջոցով ցույց է տալիս թարգմանության արժանիքներն ու բացերը, միաժամանակ գտնում, որ դրանք հունգարական գրականությունից հայերեն կատարված առաջին թարգմանություններն են: Վերջում մեջ է բերվում ի. Սոնգոտյանի կողմից հունգար մեծ բանաստեղծ Շանդոր Պետեֆիի «Կեղեղա թուիր...» բանաստեղծության հայերեն թարգմանությունը, որը «Արմենիայում» հրատարակվել է երկու անգամ՝ 1894 և 1895 թթ.: Նշվում է, որ Սոնգոտյանը Պետեֆիից կատարել է նաև այլ թարգմանություններ:

Դրախոսվող աշխատության վերջին գլխում, որ վերնագրված է «Հայ գրականությունը «Արմենիա» ամսագրում», հեղինակը պարզել է, որ հունգարերենի թարգմանված շուրջ 60 ստեղծագործությունների հեղինակներն են հայ նոր գրականության մեծանուն դեմքերից Ղ. Ալիշանը (2 գործ), Մ. Պեշիկթաշլյանը (7), Մ. Նալբանդյանը (1), Ռ. Պատկանյանը (22), Բաֆֆին (1), Ս. Շահաղիզը (11), Պ. Դուրյանը (2), Հ. Հովհաննիսյանը (3) և Ա. Մա-

բայց քանի որ նա հայկական պարբերականներում իր հրատարակած հոդվածները միշտ ստորագրել է Բաղրուպանյան, ուստի անհրաժեշտ է պահպանել նրա կողմից ընդունված արևմտահայ տառադարձությունը:

տուրյանը (10): Թարգմանությունները մա-
շամբ կատարվել են հայերենից, իսկ մեծ մա-
սը՝ ֆրանսերենից կամ գերմաներենից: Հիմնա-
կանում թարգմանվել են հայրենաշունչ բանաս-
տեղծություններ: Բարձրարժեք թարգմանություն-
ներ են կատարել ականավոր հունգար բանաս-
տեղծ Գ. Ռուդնյանսկին, հայտնի ազգագրա-
գետ-թարգմանիչ Բ. Վիկարը, հայազգի բա-
նաստեղծուհի Լ. Հարմատը, Գր. Շիմայանը:
Հեղինակը երկու լեզուների իմացության շնոր-
հիվ կարողացել է ըստ արժանվույն գնահատել
կատարված թարգմանությունները: Եվ քանի որ
մինչև այժմ էլ դեռևս հունգարերեն չկա հայ
գրականության հատրնտիր, նկատում է հեղի-
նակը, ուստի «Արմենիայի» թարգմանություն-
ները պահպանում են իրենց թարմությունը
և դառնում յուրօրինակ «Քնար հայկական»,
որին շատ են դիմել հունգար գիտնականները:

Հանդեսում լույս են տեսել նաև բազմաթիվ
հայագիտական հոդվածներ՝ նվիրված հայ գրա-
կանությանը, պատմագրությանը: Դրանց հեղի-
նակներն են Ա. Մուկարյանը, Ղ. Բաղդուպան-
յանը, Խ. Սոնգոտյանը, Գ. Գովրիկյանը, Հ. Մար-
կովիչյանը, Լ. Ըստկարյանը և ուրիշներ: Կան
էջեր նվիրված Խ. Աբովյանին, Ղ. Ալիշանին,
Մ. Նալբանդյանին և այլ հայ նշանավոր գրող-
ների: Խ. Սոնգոտյանը, խոսելով Մ. Նալբանդ-
յանի մասին, նշել է, որ նա իբրև գրող և գոր-
ծիչ հայոց Շանդոր Պետեֆին է:

Աշխատությունը գրված է գիտական բարձր
մակարդակով: Հեղինակի կողմից կատարված
վերլուծություններն ու եզրահանգումները, խա-
րըսիված լինելով փաստական հարուստ նյու-
թերի և գիտական օժանդակ գրականության
վրա, միանգամայն համոզիչ են և ընդունելի:

Անշուշտ, գրախոսվող աշխատությունը զերծ
չէ թերություններից: «Արմենիայի» հրատարակ-
ման պատմության կապակցությամբ լավ կլի-
ներ հիշել նաև, որ 1907 թ. վերջին այն դադա-
րելուց հետո վերահրատարակելու փորձ է կա-
տարել բազմավաստակ հայագետ Մ. Պոտուր-
յանը, որը 1912 թ. իլուծում մի համար է հրա-

տարակել, որպեսզի հունգարահայ երիտասարդ-
ները շարունակեն այն:

Ցանկալի կլինեի, որ հեղինակն անդրադառ-
նար Երևանի Չարենցի անվան գրականության
և արվեստի թանգարանի Գրիգոր Խալաթյանցի
և Լևոն Մսերյանի արխիվներում պահվող Գեո-
լայի «Արմենիային» վերաբերող՝ Գր. Գովրիկ-
յանի և Խ. Սոնգոտյանի կողմից գրված ուշա-
գրավ նամակներին: Սոնգոտյանը Մսերյանին
տեղեկացնում էր. «Այս կողմերը մեծ պիտույք
ունի ամսաթերթը: 12000 հայ կը բնակի այս
երկիրը, որոնք մեծամասամբ կորսնում են զհա-
յությունը: Հետ պիտո է վաստակել դայս ազ-
գակիցները հայության»: Մյուս նամակներում
խոսվում է Մկրտիչ էմինի կողմից «Արմե-
նիային» աշխատակցելու և այլ հարցերի մա-
սին (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների»,
1966, № 1, էջ 130—142):

Սակայն այս և գրքում տեղ գտած մի քանի
թերություններ ստվեր չեն գցում աշխատության
վրա, ուր հեղինակին հաջողվել է լույս աշխարհ
հանել մեր գրականության համար անհայտ
բեկորները և գնահատել դրանք: Ցանկալի կլի-
ներ, որ էվա Գևորգյանը ձեռնարկեր Սոնգոտ-
յանի՝ հունգարահայերի ազգագրությանը նվիր-
ված հատորի հայերեն թարգմանությունը: Այն
կարևոր նպաստ կարող է բերել հայ ընդհանուր
ազգագրության և բանահյուսության ամբող-
ջացման գործին: Էավ կլինեի նաև, որ սույն
արժեքավոր աշխատության հեղինակը հետագա-
յում ուսումնասիրեր նաև Գեոլա և Եղիսա-
րեթուպոլիս հայաքաղաքներում ու այլ վայրե-
րում հունգարահայերի կողմից հրատարակված
և խմբագրված հունգարալեզու պարբերական-
ները, տարեգրքերը, ինչպես նաև առանձին մե-
նագրությունները: Իսկ կարևոր գիտական նշա-
նակություն կունենար հայ և հունգար ժողո-
վուրդների բարեկամության ամրապնդման գոր-
ծում:

Պատմ. գիտ. լեկնաձու
Ս. Է. ԲՈՒԱՆՋՅԱՆ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Հայկա-
կան ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 355 էջ:

Հենրիկ Հովհաննիսյանը հայտնի է հայ
թատրոնի պատմությանը, թատերական արվես-
տի տեսության ու պատմության հարցերին
նվիրված հետազոտություններով, քննադատա-
կան հոդվածներով: «Մարտիրոս Մնակյան»
(1969 թ.), «Ողբերգության որպես գրական
տեսակի ըմբռնումը Դիոնիսիոս Թրակացու հայ
մեկնություններում» (1971 թ.), «Բեմական խոս-

քի պոետիկան» (1973 թ.), «Կատակերգու-
թյունը որպես բարոյա-գեղարդիտական ստորո-
գություն և նրա կապը միջնադարյան թատրո-
նի հետ» (1974 թ.), «Վահրամ Փափաղյանի
բեմական խոսքը» (1974 թ.), «Հայ միջնա-
դարյան թատրոնի ակունքների մասին» (1978
թ.). ահա ոչ լրիվ ցանկը նրա թատերագիտա-
կան աշխատությունների: